ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ՆԱԽԱՏԵՍՏԱՑԻՈՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿՑԻ

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԴՊՐՈՑԸ՝ ՀՀ Արմավիրի մարզի <<Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

ԱՌԱՐԿԱՆ՝ Հայոց լեզու, գրականություն

ԹԵՄԱՆ՝ Ճիշտ և նպատակային գրավոր աշխատանքները՝ որպես գրագիտության որակի բարձրացման գործոն

ԿԱՏԱՐՈՂ՝ Ալվինա Քոչարի Սուքիասյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Պողոսյան

Արմավիր 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան---------- **3**

ա. Հետազոտական աշխատանքի արդիականությունը----------**3**

բ. Հետազոտական աշխատանքի նպատակը----------**3 - 4**

գ. Հետազոտական աշխատանքի գործնական նշանակությունը----------**4**

դ. Հետազոտական աշխատանքի վարկածը----------**4 - 5**

ե. Հետազոտական աշխատանքի խնդիրները----------**5 - 6**

զ. Պաշտպանությանը ներկայացվող դրույթները----------**6**

2.Գրականության ակնարկ. Գրավոր աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները և տեսակները----------**6 - 11**

3.Հետազոտական աշխատանքի ընթացքը, տվյալների մշակումը և

վերլուծությունը----------**11 - 13**

4. Եզրակացություն---------- **14**

5. Օգտագործված գրականության ցանկ---------- **15**

6.Հավելվածներ

ՆԱԽԱԲԱՆ

<<Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ>>- մեսրոպյան հանճարի արգասիք այս հանրաճանաչ տողերը հայերեն նշանագրերով դրոշմված առաջին բառերն էին, որ դարձան մեր գրավոր խոսքի հիմքը և առաջնորդեցին հայ մանուկներին կեռմանաշատ երթուղիներում:
Հիրավի հայոց գիրն ու գրչությունը, սկսած խոր հնադարից, իր մագաղաթներով ու մատյաններով հետնորդներին հասցրեց <<իմաստության և հանճարի խոսքեր>>, որոնք, որպես գիտության գրավոր աղբյուր, գործունեության լայն ու ընդարձակ ասպարեզ բացեցին սերունդների համար:
Հայ առաջին լուսավորիչներից մինչև մեծ երախտավոր Խ. Աբովյանն ընկած ժամանակաշրջանը գրի ուսուցումը անցել է զարգացման բազմաթիվ շրջաններ և հասել մինչև մեր օրերը: Արդի հայերենի գրավոր խոսքը ունի իր դժվարությունները և ուսուցման կանոնները, որի գաղտնիքներին աշակերտները ծանոթանում են դպրոցում:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը:

Աշակերտների գրավոր և բանավոր խոսքերը տարբեր մակարդակի են լինում: Սովորաբար ավելի կուռ ու կազմակերպված է լինում գրավոր խոսքը, քանի որ գրավորի ժամանակ աշակերտը հնարավորություն ու ժամանակ ունի ընտրություն կատարելու: Գրավոր աշխատանքների արդիականությունը կայանում է նրանում, որ պիտի ձգտենք աշակերտի թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը հավասարապես խորացնել և զարգացնել:
Մարդու գրագիտության աստիճանը չափվում է նրա գրավոր խոսքով: Շատ հաճախ երբ մեկը մտքերը շարադրում է անթերի գեղեցիկ, պատկերավոր ու արտահայտիչ, ասում են. <<Ինչ գրագետ մարդ է>> : Դժբախտաբար մեր արդի միջնակարգ դպրոցների շրջանավարտների մեծ մասի խոսքն առայժմ հեռու է գրագետ կոչվելուց: ՈՒստի ելնելով արդի դպրոցի նոր պահանջներից գրավոր աշխատանքները այլ որակ են ձեռք բերում: Դրանք պետք է լինեն որոշակի կարողություններ և հմտություններ ձևավորող: ՈՒստի գրավոր աշխատանքների մեթոդապես ճիշտ կազմակերպումը կդառնա ուսումնական - ակադեմիական և սոցիալական մի շարք կարողությունների և հմտությունների ձևավորման և զարգացման միջոց:

Հետազոտական աշխատանքի նպատակը:

Գրավոր աշխատանքները հիմնականում որևէ բան սովորեցնելու նպատակ են հետապնդում: Դրանք կարող են ունենալ ուղղագրական, քերականական ու կետադրական այս կամ այն կանոնի յուրացումն ամրապնդելու, սովորած լեզվական օրենքները գործնականում կիրառելու կարողության մշակման, տեսածի կամ զգացածի մասին գրավոր կապակցված ու ճիշտ արտահայտել սովորեցնելու

նպատակ՝ նայած գրավորի տեսակի: ՈՒսուցչի նպատակն է սովորեցնել աշակերտին և ամեն կերպ կանխել նրա սխալը: Մանկավարժությունը մեզ սովորեցնում է, որ ավելի հեշտ է աշակերտին ետ պահել սխալից, քան սխալն անելուց հետո ուղղել այն, երբ արդեն աշակերտի աչքը, ձեռքը, արտասանական համակարգը սովորել են սխալին: Ինչպես որ բժիշկների համար ավելի դժվար է հիվանդին բուժել, քան առողջ մարդուն զերծ պահել հիվանդությունից, այդպես էլ մենք պիտի դիմենք նախազգուշական միջոցների և աշակերտին զերծ պահենք սխալներից: ՈՒստի գրավոր աշխատանքները ուսուցանելու և սխալները կանխելու նպատակ ունեն:

Հետազոտական աշխատանքի գործնական նշանակությունը:

Գրավոր աշխատանքներն ունեն կարևոր նշանակություն. խթանում են գրավոր խոսքի զարգացմանը, նպաստում են մարդու գրագետ լինելուն, ինքնուրույն կապակցված խոսք կառուցելու կարողության ձեռք բերմանը, անհատականության զարգացմանը, մշակում են աշակերտի մեջ խոսքի կուլտուրա, ձևավորում են աշակերտի լեզուն և ոճը, բարձրացնում են ակտիվությունը, նրա մեջ հմտացնում են վերլուծություններ ու համեմատություններ կատարելու կարողությունը, սովորեցնում են էականը տարբերել երկրորդականից, զարգացնում և հարստացնում են մտավոր կարողությունը, տրամաբանական մտածողությունը, իմացական կարողություններն ու ճանաչողությունը, ամրապնդում են իմացածը : Աշակերտները գիտակցում են հայերենի գրության ու արտասանության միջև եղած տարբերությունները, վարժվում են սովորած ուղղագրական, ուղղախոսական, քերականական ու կետադրական գիտելիքները խոսքի մեջ օգտագործելուն, հարստանում է նրանց բառապաշարը, սովորում են կանոնավոր և գրագետ գրել, ձեռք են բերում նոր գիտելիքներ ու հմտություններ, զարգանում է նրանց իմացական կարողություններն ու ճանաչողությունը:

Հետազոտական աշխատանքի վարկածը:

Իմ սեփական վարկածի համաձայն ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիներից ամենակարևորը գրավոր աշխատանքներն են: Յուրաքանչյուր գրավոր աշխատանք պետք է մնայուն հետք թողնի աշակերտի գիտելիքների պաշարում և վերացնի նրա թույլ տված սխալների մի մասը: Գրավոր աշխատանքները պետք է տրվեն այնքան հաճախակի, որպեսզի աշակերտի մոտ ձևավորվի գրագիտության բարձր սանդղակ: Այն ինչը չենք կարող բանավոր ձևով դարձնել աշակերտներինը, պետք է գրավորների միջոցով դարձնենք նրանց սեփականությունը: Եվ ի վերջո նաև ըստ իմ կարծիքի թեև թեմատիկ և ընթացիկ գրավոր աշխատանքները տարբերվում են իրարից և՛ անցկացման առանձնահատկություններով, և՛ գնահատման չափանիշներով (ընթացիկ գրավոր աշխատանքները միավորներով չեն գնահատվում), այնուամենայնիվ յուրաքանչյուր ընթացիկ գրավոր աշխատանք իր հերթին ինչ-որ

չափով նաև թեմատիկ աշխատանք է, իսկ թեմատիկը՝ ստուգող:
Կրթության նոր բովանդակության անցման վերջին մի քանի տարիների փորձը ցույց է տալիս, որ գրավոր աշխատանքները զգալի հաջողությունների են հասցնում աշակերտին, և նրա գրագիտության մակարդակը աստիճանաբար բարձրանում է:

Հետազոտական աշխատանքի խնդիրները:

Գնահատումն ուսումնական գործընթացի անբաժան մասն է, որը հնարավորություն է տալիս եզրակացություն կատարել սովորողների ուսման վերաբերալ: Այդ ամենն իմանալու համար մենք՝ ուսուցիչներս, փորձում ենք գնահատման միջոցով ստուգել սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:
Պետք է նշենք, որ գնահատումը միշտ չէ, որ հետապնդում է սովորողների առաջադիմությունը բացահայտելու նպատակ. այն ուսումնական գործընթացը բարելավելու գործում առանցքային դերակատարում ունի: Գնահատումը հաճախ իրականցվում է հայտորոշիչ թեստերի , ձևավորեղ գնահատման միջոցով:
Այս հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել հայտորոշիչ թեստի , ձևավորող գնահատման ուսուցանող գործառույթները:
Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝
- Վերհանել գնահատման նպատակը, ձևերը, տեսակները,
- Բացահայտել հայտորոիչ թեստերի, ձևավորող գնահատման արդյունավետությունը,_____.

Ուսումնասիրել հայտորոշիչ թեստերի , ձևավորող գնահատման կիրառումն ուսումնական գործընթացում,
- Ներկայացնել հայտորոշիչ թեստերի, ձևավորող գնահատման կիրառելիությունը միջին դպրոցի 9-րդ դասարանում:

Հայտորոշիչ թեստերը կազմելիս պետք է շատ ուշադիր լինել, որ թեստը համապատասխանի իր նպատակին: Առաջին հերթին պետք է բացահայտել նպատակը և հասկանալ՝ ինչի համար է տրվում այն: Չնայած նրան, որ թեստի կազմումը հետապնդում է մի շարք նպատակներ, առաջին հերթին ուշադրություն ենք դարձնում աշակերտների առաջադիմությանը և հայտորոշմանը՝ բացահայտելով սովորողների ուժեղ և թույլ կողմերը:
Հետազոտական աշխատաքի ընթացքում հիմնական շեշտը դրված է հայտորոշիչ թեստի կիրառելիության և ձևավորող գնահատման չափանիշների վրա միջին դպրոցի 9-րդ դասարանում, դրանց ներկայացված պահանջներին, չափորոշիչներին և արդյունավետությանը: Հատուկ շեշտադրում է կատարված «Հայոց լեզու» առարկային, և գործնական բոլոր օրինակները բերված են տվյալ առարկայի շրջանակներում:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Հետազոտական աշխատանքը ընդգրկում է հետևյալ հարցերը.

1.Գրավոր աշխատանքներ և նրանց տեսակները (հայտորոշիչ թեստ, թելադրություն՝ ձևավորող գնահատում)

2.Գրավոր աշխատանքների անցկացման ձևերը և առանձնահատկությունները

ա) Հայտորոշիչ թեստ և նրա կազմակերպման առանձնահատկությունները

բ) Ձևավորող գնահատում և նրա կազմակերպման առանձնահատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ .

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՏԵՍԱԿՆԵՐԸ

Լեզուն դրսևորվում է երկու ձևով՝բանավոր և գրավոր, որոնք սերտ կերպով կապված են միմյանց հետ, բայց երկրորդը հետևում է առաջինին: Գրավոր ու բանավոր խոսքի ուսուցումը զուգակցելը պահանջում է մանկավարժական մասնագիտական հմտություն: Պետք է նկատի ունենալ, որ բանավոր ու գրավոր խոսքի ուսուցման նպատակին են ծառայում քերականությունը ամբողջությամբ և գրականությունը մասամբ: Քերականական գիտելիքների ամրապնդումն ու ստուգումը իրականացվում է գրավոր աշխատանքների միջոցով:

Աշակերտների բառապաշարի հարստացման և խոսք կառուցելու կարողությունների զարգացմանը մեծապես նպաստում են գրավոր աշխատանքները:

Գրավոր աշխատանքը հանձնարարվում է տվյալ թեմայի ուսուցման սկզբում՝ նախնական գիտելիքները տվյալ թեմայից ստուգելու համար, ընթացքում՝ նյութի յուրացումը ամրապնդելու համար և թեմայի ուսուցումը ավարտելուց հետո՝ թեմայի յուրացումը ստուգելու համար : Յուրաքանչյուր գրավոր աշխատանքից հետո աշակերտը պետք է պարզորոշ տեսնի իր առաջընթացը:

Դպրոցում տրվող գրավոր աշխատանքները լինում են ըստ նպատակի՝ թեմատիկ և ընթացիկ, ըստ կատարման ձևի՝ թելադրություն, շարադրություն, փոխադրություն, տեքստային աշխատանք և թեստ:

Համաշխարհային և հանրապետության փորձը ցույց է տալիս, որ աշակերտակենտրոն դպրոցների համար աշակերտների գիտելիքների ուսուցման և ամրակայման արդյունավետ միջոց է թեստային աշխատանքը: Թեստերն ունեն դաստիարակչական և ուսուցանելու նպատակ: Դրանք նպաստում են աշակերտի ընդհանուր զարգացմանը, շրջակա աշխարհի մասին գիտելիքների պաշարի ավելացմանը: Թեստերը լինում են՝

1. Հայտորոշիչ, որը տրվում է դասընթացի սկզբում՝ սովորողներին ըստ իրենց գիտելիքների և կարողությունների դասակարգելու համար:

2. Ընթացիկ (ձևավորող գնահատում), որը տրվում է պարբերաբար՝ որոշելու սովորողների թույլ և ուժեղ կողմերը՝ հետագայում ուսուցումը բարելավելու

համար:
Գրավոր աշխատանքները կատարվում են ուսուցչի անմիջական մասնակցությամբ, օգտագործվում են գրատախտակը, դասագիրքը, զանազան պլակատներ ու աղյուսակներ, տեսաերիզներ, էքսկուրսիա և այլն:
Յուրաքանչյուր գրավոր աշխատանք ամփոփվում է գնահատման միջոցով:
Գնահատումը սովորողի մասին տեղեկություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային ու կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է:
Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումը, ինչպես նաև ուսման որակի բարելավումն ու վերահսկումն է:
Հիմք ընդունելով հանրակրթության բովանդակությանը ներկայացվող պահանջները, ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման բարեփոխված մոտեցումները և մեթոդները՝ սովորողների ընթացիկ գնահատման համար սահմանվում են հետևյալ առաջնային նպատակները.
1. Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքի արձանագրումը, թերությունների բացահայտումն ու շտկումը:
2. Հանրակրթության պետական կրթահամակարգով և միջնակարգ կրթության պետական կրթական չափորոշիչներով ամրագրված հանրակրթության բովանդակային բաղադրիչների յուրացման ընթացքի բացահայտումը, ինչպես նաև դրանց փուլային ստուգումն ու գնահատումը:
Գնահատումը կարող է լինել օբյեկտիվ կամ սուբյեկտիվ:
Օբյեկտիվ գնահատումը կախված չէ գնահատողի անձնական մտածողությունից կամ վերաբերմունքից, օրինակ՝ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը: Եվ ընդհակառակը, գնահատումը սուբյեկտիվ է, երբ այն կախված է գնահատողի անձնական դատողություններից, սկզբունքներից ու վերաբերմունքից: Սուբյեկտիվ են համարվում բանավոր հարցումները, պատասխանի շարադրանքով առաջադրանքները կամ որոշ գործնական աշխատանքներ:
ՀՀ հանրակրթությունում այժմ գործում է գնահատման երկու հիմնական ձև՝ միավորային և ուսուցանող(այն չի գնահատվում, կամ գնահատվում է բնութագրիչներով):
Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի:
Ուսուցանող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված թերըմբռնումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթաց է: Հետադարձ կապի կիրառմամբ իրականացվում է ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը:

Ուսուցանող գնահատման ձևեր ու միջոցներ են՝ հայտորոշիչ թեստը, ձևավորող գնահատումը, բանավոր հարցումը, տնային աշխատանքը,գործնական աշխատանքը, և այլն:
Ուսուցանող գնահատման մի հատուկ տեսակ է հայտորոշիչ թեստը: Նպատակը ոչ թե ընդհանուր պատկերացումներ ունենալը, կամ աշակերտներին ըստ գիտելիքների խմբերի բաժանելն է, այլ յուրաքանչյուր սովորողի ուժեղ և թույլ կողմերը պարզելը և թերացումները վերացնելու ուղիներ գտնելը:
Որևէ ուսումնական փուլ սկսելուց առաջ պետք է իրականացվի նախնական հայտորշում, որի նպատակն է սովորողների նախնական, մնացորդային գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների վերհանումը, բացահայտումը, որն անհրաժեշտ է լինելու ուսումնական գործընթացը պլանավորելու և արդյունավետ կազմակերպելու համար:
Ուսուցման և ուսումնառության կազմակերպման ամբողջ ընթացքում սովորողների ուսումնական ձեռքբերումները դիտարկելու համար պարբերաբար անց է կացվում ընթացիկ հայտորոշում, որպեսզի հստակեցվեն, թե ուսումնառության կարճ ժամանակահատվածում սովորողներն ինչ առաջընթաց, դժվարություններ կամ խնդիրներ ունեն: Ընթացիկ հայտորոշումը կարելի է անցկացնել տարբեր միջոցներով՝ բանավոր հարցման, գրավոր աշխատանքների(թելադրություն, գործնական աշխատանք), զրույցի, թեստի և այլ ձևերով: Բնականաբար, ուսուցման կազմակերպման ամբողջ ընթացքում իրականցվում է հետադարձ կապ և՛ ուսուցչի, և՛ սովորողի կողմից, որի ընթացքում ստացված արդյունքների հիման վրա բարելավվում են սովորողի գիտելիքներն ու կարողությունները, ուսուցման և ուսումնառության գործընթացը: Հայտորոշիչ թեստի հիմնական հատկորոշիչները համարվում են, այսպես կոչված, «թեստի անձնագիրը, նախագիծը», ըստ որի որոշվում կամ կազմվում են թեստի կառուցվածքն ու բովանդակությունը:
Կախված թեմայի ուսուցման նպատակից և թեմայի յուրացման արդյունքում ակնկալվող վերջնարդյունքներից՝ որոշվում է թեստի բովանդակությունը:
Թեստի նախագիծը կազմելուց առաջ, ուսուցիչը նախ պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

- Ո՞ր դասարանի համար է նախատեսված:
- Ի՞նչ կոնկրետ նպատակ է հետապնդում:
- Ո՞ր թեմայի կամ թեմաների վերաբերյալ է կազմված:
- Ո՞ր վերջնարդյունքներն են ստուգվելու:
- Ի՞նչ տիպի առաջադրանքներ են մշակվելու:
- Ի՞նչ տեսակի հարցեր են կազմվելու՝ բա՞ց, թե՞ փակ:
- Քանի՞ հարց է ներառվելու:
- Բարդության ի՞նչ աստիճան է ընտրվելու:
- Ինչքա՞ն ժամանակ է հատկացվելու ընդհանուր թեստին:

Ունենալով թեստի հատկորոշիչները՝ ուսուցիչը հեշտությամբ կարող է ստեղծել բազմաթիվ թեստեր, որոնց համար կարևոր է մշակել նաև ստուգման համար արագ և

արդյունավետ տարբերակներ: Գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու դեպքում հնարավոր կլինի խնայել և՛ ժամանակ, և՛ ջանքեր:
Օրինակ՝ ուսուցիչը կարող է առաջադրանքների ճիշտ պատասխանները նախապես գրել գրատախտակին կամ ցուցապաստառին և սովորողներին ցույց տալ թեստի կատարման ավարտից հետո: Սովորողները հնարավորություն կունենան համեմատելու իրենց աշխատանքի արդյունքները ճիշտ պատասխանների հետ և ինքնուրույն շտկել բացթողումները:
Ստուգման տարբերակ է նաև դասընկերոջ հետ աշխատանքների փոխանակումը՝ փոխադարձ ստուգումը և քննարկումը: Կամ ուսուցիչը կարող է թեստում ներառված բովանդակությունը ներկայացնել մի փոքր այլ տարբերակով, և սովորողները ոչ թե մեխանիկորեն, այլ մտավոր աշխատանք կատարելով հասկանան՝ ճիշտ են կատարել առաջադրանքները, թե ոչ: Գնահատման գործընթացի հետևյալ ձևերն ունեն մի շարք առավելություններ.
• Ինքնագնահատման և փոխադարձ գնահատման միջոցով սովորողները տեղեկանում են իրենց ուժեղ և թույլ կողմերի, բացթողումների և աշխատանքում թույլ տված սխալների մասին,
• Հնարավորություն են ունենում դրսևորելու և զարգացնելու որոշակի կարողություններ՝ վերլուծելու, համադրելու, պլանավորելու, ինքնարտահայտվելու, գնահատելու և այլն, ինչպես նաև անձնային որակներ՝ համբերատարություն, նպատակասլացություն հանդուրժողականություն, օբյեկտիվություն, արդարամտություն և այլն:
Հայտորոշիչ թեստի և ձևավորող գնահատում կատարելու համար տրվող ընթացիկ թելադրության նպատակներն են՝
• Բացահայտել սովորողների առարկայական գիտելիքները, կարողությունները և հմտությունները:
• Բացահայտել սովորողների պարտադիր նվազագույն, միջին և առավելագույն (Ա, Բ, Գ) մակարդակների ունակությունները:
• Ստեղծել հնարավորություն՝ պարզելու ինչպես յուրաքանչյուր սովորողի, այնպես էլ ամբողջ դասարանի ձեռքբերումներն ու բացթողումները տրված թեմայից:
• Խթանել ուսուցումը և օգնել սովորողներին բարելավել իրեց առաջադիմությունը:
• Ապահովել ուսումնական գործընթացում հետադարձ կապը:
Հայտորոշիչ թեստի և ձևավորող գնահատման բնութագրիչ առանձնահատկություններն են՝
• Բոլոր առաջադրաքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը:
• Սովորողների մեծ մասի համար թեստը և թելադրունության տեքստը մատչելի է:
• Թեստը կարճ ժամանակի համար է, արագ է ստուգվում , իսկ թելադրության տեքստը կարճ է՝ հագեցված տվյալ թեմայի կանոններով և կետադրությամբ:
• Արդյունքները հեշտ վերլուծելի են:
• Թեստի կատարման համար միավորային գնահատական չի դրվում. հաշվառվել է

ճիշտ և սխալ կատարված աշխատանքների քանակը, իսկ թելադրության արդյունքները վերլուծվել է ձևավորող գնահատման բնութագրիչներով՝ բառային ձևակերպմամբ:
Իմ հետազոտական աշխատանքը կատարել եմ 9-րդ դասարանում « Դերբայական դարձված» թեման ուսուցանելիս՝ անցկացնելով հետևյալ գրավոր աշխատանքները.
1. Հայտորոշիչ թեստ՝ նախնական մնացորդային գիտելիքները ստուգելու համար
2. Ընացիկ թելադրություն՝ ձևավորող գնահատում կատարելու համար

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայտորոշիչ թեստ և ընթացիկ թելադրությունը՝ ձևավորող գնահատում կատարելու համար, տրվել են Ջանֆիդայի «Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 9-րդ դասարանում: Դասարանում սովորում են 23 աշակերտ, որից 7-ը՝ տղաներ են, 16 -ը՝ աղջիկներ:
Հայտորոշիչ թեստը բաղկացած է 5 հարցից (հավելված-1)
Թեման՝ «Դերբայներ»**:**
Տևողությունը՝ 15 րոպե
Նպատակը՝ ստուգել մատուցվող թեմայի շուրջ աշակերտների ունեցած նախնական մնացորդային գիտելիքները:
Վերջնարդյունքը՝ աշակերտները կկարողանան տարբերել անկախ դերբայները և նրանցով կազմել բառակապակցություններ :
Հայտորոշիչ թեստի արդյունքներն են՝
6 աշակերտ ճիշտ են գրել 1-2 առաջադրանք
6 աշակետ ճիշտ է գրել 3 առաջադրան
2 աշակերտ ճիշտ է գրել 4 առաջադրանք
9 աշակերտներ բոլոր առաջադրանքները ճիշտ են գրել
Հայտորոշիչ թեստի արդյունքները ամփոփվել եմ քարտեզով, որը ներկայացված է հավելվածում (հավելված-2):
Արդյունքներից պարզվում է, որ աշակերտների 26 %-ն ունի որոշակի գիտելիքներ դերբայների վերաբերյալ, իսկ մնացած 74%-ի գիտելիքները գոհացուցիչ են նոր նյութը՝ այն է՝ « Դերբայական դարձված» թեման ուսուցանելու համար:
«Դերբայական դարձված» թեման ուսումնասիրելուց հետո աշակերտները գրել են **ընթացիկ թելադրություն** (հավելված-3),այնուհետև կատարել են առաջադրանք, որը տրվել է ձևավորող գնահատում կատարելու համար:

Թելադրության թեման՝ «Դերբայական դարձված, նրա շարադասությունը և կետադրությունը»**:**
Նպատակը՝ ստուգել«Դերբայական դարձված» թեմայի յուրացման աստիճանը:
Վերջնարդյունքը՝ աշակերտները կկարողանան գտնել նախադասության դերբայական դարձվածը, կետադրել,որոշել պաշտոնը:

Թելադրության տեքստը կարճ էր, հագեցած դերբայական դարձվածներով:
Թելադրելուց հետո տրվել է առաջադրանք. գտնել դերբայական դարձվածները, կետադրել, դուրս հանել տեքստից, որոշել պաշտոնը և գերադաս անդամը (ինչ դերբայով է արտահայտված):
Թելադրության արդյունքները ամփոփվել է ձևավորող գնահատման բնութագրիչներով՝ այն է՝ անբավարար, բավարար, լավ և գերազանց:
Ըստ բնութագրիչների գրավորի արդյունքները հետևյալն է.
2 աշակերտ ցուցաբերել է անբավարար արդյունք
3 աշակերտ՝ բավարար արդյունք
8 աշակերտ՝ լավ արդյունք
10 աշաակերտ՝ գերազանց արդյունք:
Թելադրության արդյունքները տոկոսային հարաբերությամբ պատկերված է գրաֆիկով (հավելված-4):
Արդյունքներից պարզվում է, որ աշակերտների 26 %-ը մասնակի է յուրացրել թեման և պետք է բացատրել նյութի չյուրացված մասը, իսկ մնացած 74%-ի գիտելիքները գոհացուցիչ են. նոր նյութը հիմնավորապես յուրացրել են :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարելով եզրակացություն՝ կարող ենք նշել, որ հայտորոշիչ թեստերի կիրառումը և ընթացիկ ձևավորող գնահատունը ոչ միայն գնահատման դեր են կատարում, այլև ունեն քողարկված ուսուցանող գործառույթներ։ Դրանք են՝

• Հայտորոշիչ թեստը լրացնելու և ընթացիկ գրավոր աշխատանք կատարելու ընթացքում աշակերտը կարող է հիշել ուսուցման ընթացում ստացած գիտելիքներն ու տեղեկատվությունը։ Դրանք կարող են լինել կանոններ, հասկացություններ, սահմանումներ, փաստեր և այլն։

• Աշակերտը կարող է ստացած գիտելիքներն ու տեղեկատվությունը կիրառել կոնկրետ գործողություններում, օրինակ՝ գրել, վերլուծել, կետադրել, համեմատելը, շարադրել և այլն։

• Աշակերտը կարող է վերլուծել իր գիտելիքները և տեղեկատվությունը, բաժանել դրանք մասերի, գտնել այդ մասերի միջև եղած կապը, առանձնացնել կարևորը և ոչ կարևորը, օգտվել տարբեր աղբյուրներից ստացած գիտելիքներից, կատարել դատողություններ, վերլուծություններ և եզրահանգումներ։

Հայտորոշիչ ցանկացած թեստ և ընթացիկ գրավոր աշխատանք պետք է և նպատակ ունեն բարելավելու ուսուցման գործընթացը և նպաստելու ուսուցման առաջընթացին։ Դրանք, որպես չափման գործիք, լավագույնս կծառայեն իրենց նպատակին, եթե կազմվեն նպատակային, առարկայական չափորոշչին և ծրագրին համապատասխան՝ հաշվի առնելով թեստ կազմելու և ձևավորող գնահատում կատարելու պահանջները:

Իմ հետազոտական աշխատանքի արդյունքները գոհացուցիչ են, քանի որ գրավոր աշխատանքի այն տեսակները, որոնք ես կիրառեցի թեման սովորելու և յուրացնելու համար, նպատակային էին և արդյունավետ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրյան Ա., Գրավոր խոսքի բարելավման մի քանի հարցեր, Երևան 1974

2. Թովմասյան Թամարա, Գրավոր խոսքի զարգացումը 5 - 9 - րդ դասարաններում

3. Մանուկյան Ա. Ս., Գրավոր աշխատանքների ուսուցման համակարգը,

Երևան 1982

4. Վիրաբյան Ն.,Մարգարյան Լ., Հայոց լեզվի գրավոր աշխատանքների ժողովածու, Երևան 2010

5. Մ. Առաքելյան, «Գնահատում: Ամփոփիչ / միավորային գնահատում, նպատակը, ձևերը, տեսակները», https://znanio.ru/media/metodika-2627565

6. «ԿԶՆԱԿ» Հիմնադրամի գնահատման մշակման և զարգացման բաժին - Հայտորոշիչ թեստ / https://kznakgnahatum.blogspot.com/2021/08/blog-post_74.html?m=1/

7. Հայտորոշիչ թեստը՝ որպես ուսուցանող գնահատման տեսակ (Զեկույց) / armedu.am/

8. ՀՀ ԿԳ նախարարություն, Հայոց լեզու և գրականություն, Գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու

<u>Հավելված – 1</u> ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ 9- ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Ամսաթիվ ----------

Ազգանուն, անուն ----------

Թեման - Դերբայներ

Տևողությունը – 15 րոպե

1.Ո՞ր շարքում չկա հարակատար դերբայ.

ա) ծռած, ստեղծված, տեսած

բ) արարած, տախտակամած, մթամած

գ) կերած, կռացած, մոլորված

2. Ընդգծի՛ր անկախ դերբայները.

Ծարաված, թռել, թողնել, արթնանալ, գրում, ուշանալու

3.Ո՞ր դերբայների վերջավորություններն են. գրել օրինակ

- ացող ----------
- ալիս ----------
- ած ----------

4.Ո՞ր շարում են միայն անորոշ դերբայները.

ա) վազել, շվարել, կարոտել

բ) կարդալ, ելնել, առնել

գ) խոստովանել, բաբախել, մեռել

դ) չքացել, ապրել, բարձրանալ

5. Տրված դերբայներով կազմել կապակցություններ.

ա) քնած ----------

բ) մոտենալ ----------

Հավելված – 2

ՀՀ	Անուն ,ազգանուն	Առաջադրանքներ				
		1	2	3	4	5
1	Ամիրխանյան Մարիամ	+	+	+	+	+
2	Ամիրխանյան Մերի	+	+	+	+	+
3	Ամիրխանյան Սամսոն	+	+	+	+	+
4	Ավդալյան Ալլա	+	+	+	+	+
5	Զաքարյան Արմեն	+	+	+	+	+
6	Թովմասյան Ծովինար	+	-	-	-	+
7	Թովմասյան Սյուզաննա	+	+	+	-	-
8	Թովմասյան Քրիստինե	+	-	-	-	+
9	Խլղաթյան Սառա	+	+	-	+	-
10	Հայրապետյան Սպարտակ	+	-	+	-	+
11	Հովհաննիսյան Սերինե	+	-	+	-	-
12	Հովհաննիսյան Վարդուհի	-	+	-	-	-
13	Ղազարյան Գոռ	+	-	-	-	+
14	Ղազարյան Էրիկ	+	-	+	-	+
15	Ղամբարյան Լուսինե	+	+	+	-	+
16	Մանուկյան Մարիա	+	+	+	+	+
17	Մանուկյան Մարիամ	+	-	+	-	+
18	Մարգարյան Օլյա	+	+	+	+	-
19	Մելիքյան Սուսաննա	+	+	+	+	+
20	Մելքոնյան Սուրեն	-	+	-	-	-
21	Չլոյան Ռուզաննա	+	+	+	+	+
22	Սրեյան Արամ	+	-	+	-	+
23	Վարդանյան Գայանե	-	+	+	+	-
24						
25						

\+ Ճիշտ գրված առաջադրանքները

\- սխալ գրված առաջադրանքները

Հավելված – 3

Թելադրության տեքստը

Հայոց մեծ եղեռնը

Ազգայնամոլ երիտասարդ թուրքերը, ունենալով նվաճողական նպատակներ, ցանկանում էին ստեղծել մեծ ու միաձույլ կայսրություն: Սակայն օսմանյան տիրապետության տակ գտնվող արևմտահայերը, ինչպես նաև բախտակից մի շարք այլ ժողովուրդներ, որոնք ենթարկվում էին խիստ ծանր հալածանքների ու ճնշումների, ճիգ էին թափում՝ փորձելով ազատագրվել թուրքական դաժան տիրապետությունից: Հայերի այդ փորձերը կանխելու և Հայկական հարցին ընդհանրապես վերջ տալու նպատակով՝ երիտասարդ թուրքերը, ծրագրավորելով ֆիզիկական բնաջնջման ենթարկել ամբողջ արևմտահայությանը, հետևողականորեն անցան դրա իրականացնանը: Թուրքիայի կառավարիչները, որոշելով օգտագործել բռնկված համաշխարհային պատերազմը, հայերի նկատմամբ իրենց զարհուրելի ծրագիրը՝ ցեղասպանության քաղաքականությունը, իրականացրին պատերազմի ընթացքում:

Հավելված – 4